Քաշունի

Բնակչություն՝15

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 48 կմ,

Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 55 կմ,

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1500 մ,

Հնում եղել է զուտ հայաբնակ բնակավայր: Գյուղի շրջակայքում պահպանվել են հին գյուղատեղի և եկեղեցու ավերակների մնացորդներ: Մտել է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Բաղք-Քաշունիք գավառի մեջ, որից էլ ստացել է նոր անվանումը: Նախկինում ունեցել է Մալդիշ, Մալդաշ, Մալտաշ անվանումները: Քաշունի է վերանվանվել 1992թ.-ին: Գյուղի նախկին բնակիչները 1920-ական թթ. այստեղ են տեղափոխվել նույն տարածաշրջանի Տանձատափ գյուղից, որը մինչ այդ եղել է վերջինիս ամառանոցավայրը, որից էլ ստացել է Մալդաշ անվանումը:

Գյուղը տեղադրված է Որոտան գետի աջափնյակում, Բարգուշատի լեռնաշղթայի ճյուղավորություններից՝ Մալդաշի լանջին՝ ծովի մակարդակից 1850 մ բարձրության վրա:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝

-անասնապահությունը,

-դաշտավարությունը:

Գյուղատնտեսությամբ զբաղվում է 14 գյուղացիական տնտեսություն:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 858 հա, այդ թվում՝

-Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 808 հա, որից՝

-վարելահող՝ 74 հա, բազմամյա տնկարկ՝ 1 հա, խոտհարք՝ 190 հա, արոտ՝ 260 հա, այլ հողատեսք՝283 հա

-բնակավայրերի հողեր՝ 13 հա,

-էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝1 հա

-անտառային հողեր՝ 22 հա, որից անտառածածկ՝ 22 հա

-ջրային հողեր՝ 13 հա: